№ 14. Կիրակի, յունիսի 12—1866. № 14.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Թիֆլիսի առևտրական գազեթ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտիցը մինչև Յունվարը քաղաքումս՝ 2 մանեթ 50 կոպ., դուրսը՝ 3 մանեթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվիլ կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Խմբագրութենից: Տէրութենի կարգադրութիւնները: Պետերբուրգումը կազմված Ռուսաստանի տելեգրաֆի ընկերութիւնը: Թիֆլիսի փոշտայի կառավարութենից: Փոշտի կառքերի կառավարութենի գլխաւոր կոնտորից: Կովկասեան Փոխարքայի գլխաւոր կառավարութենի մեծ Բարոն Ն. Նիկոլայու մասին: Էլի վեկսիլների մասին: Աղողջութիւնը ուսումնարանների մէջ: Հանդուցեալ Նալբանդեանցի վրայ երկու խօսք: Զանազան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ:

ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻՑ:

Վաճառականի» գազեթի խմբագրութիւնը յայտնում է, որ դեռ էլի շարունակվում է էս գազեթին ստորագրվելը և բոլոր նոր ստորագրվողները կստանան գազեթը 1 №-ից սկսած:

Երբ որ կհատնին «Վաճառականի» սակաւաթիւ մնացած 1-ին նումերները, կյայտնենք մեր ապագայ ստորագրվողներին տեղեկենալու:

ՏԷՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄԸ ԿԱԶՄՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԵԼԵԳՐԱՖԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ:

Էս տարի ապրիլի 14-ին Պետերբուրգումը առուստուր անող՝ Հուստաֆ Հաուֆ և ընկ., Կարլ Շպիգելը, Լենենաուն և ընկ., կոմերցի սովետնիկ Յ. Գլազունովը և տիտուլեարնի սովետնիկ Տրուբնիկովը կառավարութենից իրաւունք ստացան Ռուսաց տելեգրաֆի ընկերութիւն կազմելու: Դրանք կ'ժողովեն և կհաղորդեն նրանց մօտ ստորագրված մասնաւոր մարդկանց՝ թէ քաղաքական և թէ առևտրական գործերին վերաբերեալ դեպեշներ:

Էդ ընկերութենի կազմողները տելեգրաֆի կառավարութենի հետ էս հետևեալ պայմաններն են դրել:

1.) Էդ ընկերութիւնը պէտք է գրանվի Պետերբուրգումը և թղթակիցներ կունենայ Ռուսաստանի միւս քաղաքներումը և նմանապէս սահմանիցը դուրս:

2.) Էդ ընկերութենի թէ ուղարկված և թէ ստացած դեպեշները ենթարկվում են էն կանոններին, որ սահմանված են տելեգրաֆի կառավարութենից:

3.) Ռուսաստանի տելեգրաֆի ստանցիաները պէտք է ընդունեն քաղաքական գործերին վերաբերեալ դեպեշները ուղարկելու ինչպէս ընկերութենից, նմանապէս և նրա թղթակիցներից:

4.) Դեպեշների առանձին տպելու համար պէտք է ունենալ խմբագրող, որն որ հաստատվում է տպագրութենի գործերի գլխաւոր կառավարութենից և պատասխանատու է դառնում օրէնքների առաջ միւս խմբագրողների պէս:

5.) Եթէ էդ ընկերութունը ում և ինչ սխալ դեպեշ ուղարկի, էն ժամանակը դա կպարտաւորվի տէրութենից՝ շուտով ուղարկել էն մարդուն սխալ դեպեշայի տեղ ուղղածը իր ծախսով:

6.) Էս Ռուսաց տելեգրաֆի ընկերութենի հաստատվելով մասնաւոր մարդիկը չեն կորցնում իրանց սեփհական թղթակիցներից կամ գործակալներից իրանց հարկաւոր տեղեկութիւններ ստանալու իրաւունքը: Մասնաւոր մարդիքը կարող են նմանապէս, տէրութենի հրամանով, սրա նման ընկերութիւններ կազմել:

ԹԻՖԼԻՍԻ ՓՈՇՏԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԻՑ:

Թիֆլիսի փոշտայի կառավարութիւնը յայտնում է հասարակութենին, որ էս յունիսի 12-ից մինչև սեպտեմբերի 1-ը Թիֆլիսից Կոջոր դիլիժանսներ կման գան: Թիֆլիսից դիլիժանսները կգուրս գնան դէպի Կոջոր ամեն օր, առաւօտեան 7 սահաթին: Կոջորից յետ կգան դիլիժանսները երեկոյեան 6 սհաթին: Բացի էդ ուրից շաբաթ օրերով՝ ճաշից յետոյ առանձին դիլիժանս կերթայ դէպի Կոջոր, իսկ կիրակի օրերով կերթան էնտեղ երկու դիլիժանսներ, որոնցից մէկը, յետ կդառնայ թէ չէ, էլի դարդակ կերթայ պատաժիրների (դիլիժանսի մէջ նստողներ) համար, որոնք կ'մնան Կոջորումը մինչև երկուշաբթի: յետոյ երկուշաբթի առաւօտեան 6 սահաթին յետ է գալիս էդ դիլիժանսը Թիֆլիս:

Դիլիժանսի մէջ նստելու գները առաջվաններն է՝ կողքին նստելու գինը 1 մ. է և յետևինը 75 կոպ. մէկ գնալու, կամ մէկ գալու համար:

Տեղերի տոմսակները կարելի է ամեն ժամանակ ստանալ փոշտայի կառավարութենումը դիլիժանսների դրծերը կատարող Բիբիկից:

ՓՈՇՏԻ ԿԱՌՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԻ ԳԼԽԱՒՈՐ ԿՈՆՏՈՐԻՑ։

Փոշտի կառքերի կառավարութենի գլխաւոր կոնտորը յայտնում է հասարակութենին, որ Կովկասի Փոխարքայ Մեծ Իշխան Միխայէլ Նիկոլայեվիչի հրամանով ամառվան ժամանակները յունիսի 5-ից սկսած Թիֆլիսից Բորջոմ փոշտի օմնիբուսներ կերթան ու կգան։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻ ԳԼԽԱՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԻ ՄԵԾ ԲԱՐՈՆ Ա. ՆԻԿՈԼԱՅՈՒ ՄԱՍԻՆ։

Որովհետև Կովկասեան Փոխարքայի կառավարութենի Գլխաւոր՝ Բարոն Ա. Նիկոլայն գնաց ամարանոցը, էս պատճառով նրան խնդիրներ տալու համար նշանակվում է չոլեքշարթի օրը Կոջորումը Խալաթեանցի տանը։

ԹԻՖԼԻՍ

յունիսի 11–1866.

Մեզանից ամեն մէկը թէ տալու ունէ և թէ ստանալու, կամ ինքը պարտ է, կամ իրան պարտ են, ուրեմն մենք ամենքս միմեանց կարօտութիւն ունինք և էդ պատճառով ամենքս պէտք է օգնենք միմեանց, երաշխաւոր դառնանք միմեանց համար և էդպիսով թոյլ չտանք միմեանց աղքատանալու և կուտրանալու։ Ճշմարտութիւնը, մեր անձնական օգուտը և ընկերական կեանքը պահանջում են էդ բաները։ Առանց միմեանց օգնելու և միմեանց երաշխաւորութիւն ունենալու չկայ և չի կարող լինել հասարակական կեանք։

Ինչպէս արդէն ասացինք անցեալ անգամը, վեկսիլների գործածութիւնը օրէցօր շատանում է. «հաւատ (էհտիբար) ունեցէք, երաշխաւոր էլէք միմեանց համար»—ահա վեկսիլի բարոյական նշանակութիւն, որն որ ձեռք է ձեռք է անց կենում և էդուրով փողի տեղ գործ է տեսնում առևտրական աշխարհումը։

Էդպէս ահա երկու տեսակ վեկսիլ կայ՝ 1.) մանաւոր—երբ որ վրէն միմիայն մէկ մարդու ստորագրութիւն կայ և 2.) հասարակական—երբ որ վեկսիլի ստորագրողները կամ պարտաւոր անձները շատ են։ Բայց ինչի է էս երկրորդը աւելի գործածական, քան թէ առաջինը. վերջապէս ինչի է ոսկէ ու արծաթէ փողը աւելի դուրս գնում, քան թէ վեկսիլը։

Թագաւորական կնիքը վրէն ունեցող ոսկէ կամ արծաթէ փողը, ինչպէս անցեալ անգամն էլ ասել էինք, է անժամանակ և անանուն վեկսիլ, որ տվվում է ամենքի անունով, որի վրայ կայ հասարակութենի երաշխաւորութենի նշանը, այս ինքն թագաւորական կնիքը։ Ուրեմն եթէ ամեն մասնաւոր վեկսիլի փոխանակ, որի վրայ նշանակվում են զանազան մանրամասն հանգամանքներ՝ (թիւը, վեկսիլ տվողների անունները և ստորագրվողները, վճարման ժամանակը, տեղը, դումարը և այլն) դուրս տալ ա ն ա ն ս ա ն և ա ն ժ ա մ ա ն ա կ վեկսիլները էնպէս, որ էլ հարկաւոր չլինի ոսկու ու արծաթի վրայ խուրդայ անելը, էն ժամանակը ոսկին ու արծաթը կդառնայ հասարակ ապրանք և էլ դրանցից փող կտրելը աւելորդ կլիներ։

Ասենք թէ մէկ 5,10,15 հազար վաճառականներ միասին ընկերութիւն կազմելով առանց դումարի, առանց փողի, պայման դընէին իրանց մէջ միմեանց վեկսիլները վեր առնել փողի տեղ։ Ասենք թէ էդ վաճառականները իրանց առուտուրը հեշտացնելու համար կազմէին մէկ ա ն փ ո ղ, ա ն գ ո ւ մ ա ր, կամ պարզ ասենք անոսկի բանկ, որը որ միշտ ընդունէր մասնաւոր վեկսիլներ և տեղը դուրս տար անանուն, անժամանակ տոմսակներ իր կնիքը վրէն։ և մի և նոյն ժամանակը ի հարկէ բանկի համար վեր առնէր $^1/_2$–ից մինչև $1^0/_0$։ Էն. ժամանակը կուտրութիւնները ի հարկէ կվերջանային, փողի պակասելու դանդատն էլ չէր լսվիլ և առուտուրը էնպիսի անհիմն սկզբունքների վրայ չէր լինի հաստատված, ինչպէս որ հիմի։ Միթէ աւելորդ կլիներ էդպիսի բանկերի հիմնարկութիւնը մանաւանդ հիմի, երբ ամենքը դանդատվում են թանկութենի և փողի պակասութենի վրայ։ Հիմի առհասարակ ամեն երկիրներումը անտրոզութիւնը վախեցնում է ամեն մասնաւոր մարդկանց, ամենքը ագահութենով պահումեն ոսկին ու արծաթը, և դէպի միմեանցը էհտիբար չունին։ Երբ որ մէկ տեղ լսվում է թէ փող չկայ և վնասում են մէկ հնարք փողի պակասութիւնը լրացնելու, էդ ժամանակն աչքը վախեցած և յետադէմ մարդիկը խորհուրդ են տալիս—«պահել, ժողովել, չհով տալ, տեղը ի հարկէ լաւ դրամ վեր առնելով»։ Փողը—առուտուրի չարիքն է, փողն է պատճառ առևտրական բոլոր գործերի խափանվելուն, դէպի միմեանց էհտիբար չունենալունը, էն ագահութենինը և ահուդողինը, որ փողի պակասութենի ժամանակը տիրում է մեր վաճառականներին։ Փողը ամեն ժամանակ պատճառն է էն պատերազմի, որ լինում է փողատէրների ու զառաքինների (մէկ կողմից) և վաճառականների ու ֆաբրիկանտների (միւս կողմից) մէջ։ Փողի պակասութենի ժամանակը ի հարկէ աւելի վնասվում են վաճառականները ու գործարանների տէրերը, որովհետև էդ ժամանակ բարձրանում է փողի չարը, էդ պատճառով դժուար է լինում փող վեր առնելը, մեծ գործ կատարելը, ուրեմն գործը քչանում է, պարապ մարդիկ չատանումեն, թանկութիւն է ընկնում, ապրանքները քիչ են ծախվում, վաճառականները ու ֆաբրիկանտները վնասվում են, ու էդպիսով խլվում է մշակ մարդկանց օրական հացը։ Փողի պակասութենի ժամանակը ֆաբրիկանտը և գործարանի տէրը իրանք թանկ առնելով չմշակած ապրանքները, քիչ էլ ցանկացողներ են գտնվում նրանց ապրանքներ չվնել տալու, էդ պատճառով քիչ ապրանքներ են չինում, արձակում են աւելորդ մշակներին և պակասացնում են էն մշակների օրական վարձը, որոնք մնում են նրանց մօտ մշակութիւն անելու։ Փողի պակասութենի ժամանակը վաճառականները իրանց ապրանքների գները բարձրացնում են, որովհետև իրանք էլ թանկ են առած և բայի էդ դրանք հաւատացած չեն, որ պէտք է ծախվի էդ ապրանքը և վերջապէս որովհետև հաւասի դիտեն, որ ոչով էդպիսի ժամանակում իրանից աժան չի ծախվի։ Փողի պակասութենի ժամանակը առանց օգուտի և աժան գնով ապրանք ծախողները էն մարդիկն են միայն, որոնք կուտրանալու վտանգի մէջն են և ուրեմն կամայ ակամայ ստիպված են ինչպէս պատահի ծախելու և փող ստանալու պատրքերը վճարելու համար։

Ա. Ե.

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՄԷՋ։

Ժողովրդի առողջութենի համար արած հոգսերիցը գլխաւորը ի հարկէ պէտք է լինի ուսումնարանների մէջ երեխաների մարմնի կանոնաւոր զարգացումը։ Բայց հիմիկվան ժամանակներումը թէպէտ ուսումնարանները շատ փոփոխութիւնների տակն ընկան դէպ ի լաւը, շատ էլ հեռացան դրանք առողջութենի կանոններից, երեխաների բարոյական և մարմնաւոր զարգացմանից։

Ամենքը դանդատվում են, որ ուսումնարաններումը մտքի և սրտի զարգացումը միատեսակ չէ առաջանում մարմնի զարգացման

և բթամիտ մարդիկ, որոնք թէպէտ և կենդանի կղզուն դան ուսումնարանից, բայց վայ էն վենդանութենին։

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ ՎՐԱՑ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ։

Մենք իր ժամանակին յայտնեցինք մեր ընթերցողներին Մ. Նալբանդեանցի մահի սըխուր լուրը և նրա մարմնի Նոր Նախիջևան բերելը և թաղելը։

Հիմի «Մեղու Հայաստանի» դաղեթումը տպած Նախիջևանից ստացած նամակիցը հաղորդում ենք մեր ընթերցողներին նրա մասին մեկ քանի մանրամասը տեղեկութիւններ։

Միքայէլ Նալբանդեանցը ծնվել է Նոր Նախիջևանում 1830 թվի հոկտեմբերի 27-ին։ Երեխայութենից երևում է էլել սրա եռանդը դէպի ուսումնասիրութիւնը։ Սովորում է էլել սա Տէր Գաբրիէլ Պատկանեանի մօտ մինչև 1846 թիւը։ Սրա մօտ սովորելիս Նալբանդեանցը եկեղեցումը դպրութիւն էլ է էլել անում։ 1847 թվին դալիս է Նոր Նշանակված Նախիջևանի և Բեսարաբիայի Մատթէոս արքեպիսկոպոսը և վեր է առնում Նալբանդեանցին իրա մօտ քարտուղար է կարգում։ Վեց տարի քարտուղարութիւն է անում։ 1853 թվին գնում է Մոսկով և Պետերբուրդ, համալսարանումը հարցաքննվելուց յետոյ, ստանում է վարժապետութենի կոչումը և Մոսկովի Լազարեանց ուսումնարանումը հայոց լեզուի վարժապետ է կարգվում։ Քիչ ժամանակից յետոյ թողնում է սա էդ պաշտօնը և Մոսկովի համալսարանումը լսում է էլել բժշկականութիւնը։ 1858 թվին Նալբանդեանցը դվխաւոր աշխատակից դառաւ Պ. Նազարեանցի հրատարակած «Հիւսիսափայլ» անունով ժուրնալինը։

1857 և 1858 թվերին, երկու անդամ դընաց Նալբանդեանցը սահմանները դուրս, մանեկաւ Կ. Պոլիս, Պարիժ, Վիեննա և ուրիշ տեղեր և ծանօթացաւ ամեն տեղ էլ հայերի հետ։

1860 թվին Պետերբուրդի համալսարանումը հարցաքննվելուց յետոյ ստացաւ Արևելեան լեզուների կանդիդատի կոչումը։

Բայց Մ. Նալբանդեանցի անմոռանալի և արդիւնաւոր գործը Հնդկաստանումը Նոր Նախիջևան քաղաքի համար կտակ արած փողերի բերելն է։ Նոր Նախիջևանի հիմնվելուց յետոյ Հնդկաստանի հարուստ հայերը փողեր էին կտակ արել Նախիջևան քաղաքի համար։ 70 տարի էր էն փողերը էնտեղ ժողովվում էին և Նախիջևանի մէջ բնակվող հայերից ոչ մէկը չէր վստահանում դնալ և բերել փողերը—կորածի հաշումն էին։ Նալբանդեանցը յանձն առաւ էդ փողի բերելը, ընտրվեցաւ Նախիջևանի հայերի հասարակութենի կողմից երեսփոխ և գնաց Կալկաթա։ Էդտեղ դա մեծ դժուարութիւններին յաղթելով վեր առաւ կտակ արած փողերը և 1862 թվին բերեց Նախիջևան։

Բայց էդ ժամանակից սկսած նրա օրերը անմխիթար անց կացան և էս տարի մարտի 31-ին 36 տարեկան հասակումը վախճանվեցաւ։

ՋԱՆԱՋԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Հաւասարութիւնը կանոնի առաջ։

Գեներալ-Լէյտենանտ Գրանտը, հիւսիսային Ամերիկայի երևելի զօրապետը էս մօտիկ ժամանակներումս Վաշինգտոն քաղաքումը բռնվեցաւ՝ քուչաներումը իր կառքը չատ շուտ քշելու համար։ Բռնվիլ չկամենալով սա իր յանցանքի համար հանձնեց տալիս էր պոլիցիականին նշանակած տուգանքը, բայց պոլիցիականը յայտնեց նրան, որ իրան տված կանոնները չի կարող դա փոփոխել, վանն որոշ պահանջեց Գրանտից, որ նա հետևի իրան։ Գրանտը հնազանդվեցաւ պոլիցիականին, կանոնի պատիւը պահպանելու համար։

Մի և նոյն բանը պատահեցաւ և Լինկոլնին էն ժամանակը, որը որ դա Միացեալ նահանգների պրեզիդենտ էր։ Սրա կառավարը չէր քշում կառքը քուչայի մէջ տեղը, այլ քուչայի կողքով։ Կանոնով արգելված է քուչայի կողքով կառքի մանածելը, էդ պատճառով երբ որ պոլիցիականը տեսաւ Լինկոլնի կառքի կանոնի ընդդէմ վարվիլը, դնաց, կանգնեցրուց և պահանջեց հետևիլ իրան պոլիցիան։ Կառավարը չէր համաձայնում, բայց Լինկոլնը, որ խմացաւ բանի զօրութիւնը, հրամայեց իր կառավարին կատարել պոլիցիականի հրամանը։ Կանչեց Լինկոլնը պոլիցիականին, նստեցրուց իրա հետ կառքի մէջ։ Գնացին նրանք միասին պոլիցիան և Լինկոլնը վճարեց իր արած յանցանքի համար կանոնով նշանակած տուգանքը։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ։

Լօնդոն մայիսի 18.

Ամեն կողմից լսվում են դեռ էլի կուտրութիւնների համբաւները, զարմանալի կերպով զոհ են լինում էդ բանին Անգլիայի մանր քաղաքների խեղճ բնակիչները, որոնք իրանց ունեցած բոլոր հարստութիւնը էդ բանկերումն էին դրել։ Խեղճութիւնն էն տեղն է հասել, որ շատ դերդաստաններում որ սրանից առաջ ճաշը տեսակ տեսակ կերակուրներից էր լինում բաղկացած, այժմ շաբաթը մէկ անդամ հազիւ են միս առնում։ Շատ դերդաստաններ ընկերութիւններ են կազմել կերակրեղէնի ժամն պաշար տանելու մաքով։ Հարիւր հազարներով աղքատացած դերդաստաններ մնային առանց հացի։

Լսվում է, որ Անգլիայի միջնորդութենով Ֆրանսիայի բանկը մտադիր է Անգլիայի բանկին օգնութիւն հասցնելու։ Թէ և Անգլիայի բանկը ստացաւ իրաւունք իր կարգիցը դուրս տոմսակներ դուրս տալու, բայց մինչև էսօր չէ սկսել էդ բանը։ Էս մէկ շաբաթում մէկ քանի միլիոնի ոսկի է բերած Ամերիկայից, բայց բերժայի վրայ քիչ ազդեցութիւն ունեցաւ էդ բանը։

Օդեսա մայիսի 13.

Կուրսը Մարսելի վրայ 275 սանտիմ։

Պետերբուրդ մայիսի 25.

Կուրսը Լօնդոնի վրայ . $26\frac{1}{2}$ պէնս։

Պարիժի վրայ. . $271\frac{1}{2}$ սանտիմ։

5% Լատարեյով առաջին փոխառութենի տոմսակները . . . 110 ման.

5% Լատարեյով երկրորդ փոխառութենինը . . . . . $105\frac{1}{2}$ ման։

Ոսկին . . . . . 7 մ. 57 կ.

Թիֆլիս 1866 յունիսի 11.

Թէև էս շաբաթ մօտ 40 հակը բամբակ ծախուեց 10 մ. 50 կ., բայց դարձեալ բամբակի ոչ առուտուր կայ և ոչ մաղանդայ։

Բուրդը 4 մ. մինչև 8 մ

Լեղակը . . . . . 160 մ.

Ինդիկու շաքարը . . 10 մ. 60 կ.

Ռսինը . . . . . —

Արծաթը 72 պրօբի . . . 70 մ.

— —84 պրօբի . . . 300 մ.

Ոսկին . . . . . 7 մ. 25 կ.

дозволено цензурою
Іюня 12-го 1866 г.

Հ. ԻՆՖԻԱՆՑԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ։

Խմբագրող և հրատարակիչ Գ. Տէր Աղէքսանդրեանց։